Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Բիլդինգ Կապիտալ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իր կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով 28.12.2023 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ՝ <<Բիլդինգ Կապիտալ>> ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ թիվ <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, ՀՀ վիճակագրական կոմիտեի թիվ <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին <<Բիլդինգ Կապիտալ>> ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցը բավարարել ամբողջությամբ.

1.1. անվավեր ճանաչել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իր կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով 28.12.2023 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ՝ <<Բիլդինգ Կապիտալ>> ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին 02.02.2024 թվականի կայացված որոշումը, որպես հետևանք՝

1.2.1. անվավեր ճանաչել <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը,

1.2.2. պարտավորեցնել ՀՀ վիճակագրական կոմիտեի թիվ <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին <<Բիլդինգ Կապիտալ>> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Թումասյան) 23.02.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի փաստացի կատարումը:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ Հարկադիր

կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am